ՄԱՐՏՈՒՆՈՒ ՃԱՆՐ ԾՆՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի հարավ-արեւելյան մասում է փռված Պատմական Հայաստանի Արցախ նահանգի Վարանդա գավառի մաս կազմող այժմյան Մարտունին: Շրջանը համեմատաբար բարենպաստ կլիմայական պայմաններ ունի:

Ի տարբերություն անտառազուրկ, խիստ սակավաջուր, չոր կլիմայով արեւելյան մասի, շրջանի արեւմտյան նախալեռնային ու լեռնային հատվածը գեղատեսիլ է, հարուստ պտղատու ծառատեսակներով, անտառներով, զուլալ գետակներով եւ սառնորակ աղբյուրներով: Մարտունու շրջանի ընդերքը հարուստ է մարմարի, կրաքարի, գրանիտի պաշարներով: Մարտունու շրջանը մարզի հացի շտեմարանն է: Բացի հացահատիկից այստեղ շատ է նաեւ խաղողը, բանջարանոցային կուլտուրաները եւ պտղատու այգիները, մեղեցն ու կաթնամթերքները: Մարտունու շրջանը արցախյան շարժման առաջին դրոշակակիրն էր: Դուցե հենց այդ պատճառով աղրբեջանական իշխանությունները տնտեսական ու քաղաքական ուժեղ ճնշում են գործադրում նրա վրա: Շրջանի քառասուն բնակավայրերից լոկ չորսն են աղրբեջանաբնակ, սակայն փոխարենը երկու կողմից սահմանակից է Աղդամի եւ Ֆիզուլու աղրբեջանական շրջաններին, եւ պարբերաբար ենթարկվում է թալանի, շրջափակումների ու վայրագությունների:

Աղրբեջանական ՕՄՕՆ-ականները, որոնք պարետային զինվորական մարմինների թույլտվությամբ տեղավորվել են Խոջալանի (կպած է Մարտունուն), Ղարադաղլու (տեղավորված է Մարտունի Ստեփանակերտ խճուղու վրա, Կաղարծի գյուղի մոտ), Ամիրալար եւ Վերին-Վեյսալի ադրբեջանական բոչվորներից մնացած տեղավայրերում, չորս կողմից շրջափակել են շրջկենտրոնի մոտակա գյուղերը եւ նույնիսկ ցերեկային ժամերին այնտեղ հասնելու համար մարդիկ շրջանցող ճանապարհներ են որոնում: ՕՄՕՆ-ականները օրը ցերեկով շրջում են ավտոմատ հրազենով, առանց թաքցնելու դրանք ներքին զորքերի ստորաբաժանումների զինվորներից, իսկ շրջանի ներքին գործերի հայ ծառայողները զրկված են զենք կրելու հնարավորությունից, էլ չենք խոսում, որ շիջանի բնակիչներից վաղուց արդեն բռնագրավված են որսորդական հրացանները: Ստացվել է այնպես, որ հրազենին պետք է պատասխանել միայն բարոյախտական քարոզներով: Վերջին ամիսներին շրջանը տրվել է քանից ավելի զոհեր, բոլորն էլ երիտասարդ, որոնք ընդդիմացել ու չէին թողել, որ թալանվեն գյուղերն ու անասնապահական ֆերմաները:

Գիշերային գրոհներից եւ հարձակումներից արդեն բզկտվել են Մյուրի-շեն, Ավդուռ, Հացի, Նոր-շեն, Սոս եւ այլ գյուղեր: Աղրբեջանական բաշիբոզուկները, ավտոմատ հրազենով եւ հրացաններով զինված, հարձակվում են անասնապահական ֆերմաների վրա, սպանում պահակներին, գողանում հոտը, իսկ ներքին ծառայության ստորաբաժանումները շրջկենտրոնում արտակարգ դրություն են սահմանել եւ փաստորեն ապրում են [illegible] թալանը:

Այդպես թալանվեց Մյուրի-շենի կովերի ֆերման: Չորս ավտոմատավոր հարձակվեցին պահակ Ռ. Մեժլումյանի վրա ու տարան կոլտնտեսության ունեցած 60 կովերի կեսը: Այդպես եղավ նաեւ Սոսում, երբ հրոսակները սպանեցին պահակներից մեկին, իսկ մյուսը մինչեւ հիմա անհայտ կորած է:

- Երբ բողոքում ենք շրջանի պարետին, նա պատճառաբանում է, թե անձնակազմը (մոտ 180 զինվոր) քիչ է, մարդիկ չեն հերիքում, ուստի դրությունը վերահսկել անհնար է,- ասում է շրջանի կուսկոմիտեի առաջին քարտուղար Օ. Եսայանը:- Ստեղծված իրավիճակը շատ է հուզում շրջանի ղեկավարներին, սակայն ի՞նչ անենք: Նրանք անզոր են պետականորեն կազմակերպված հանցագործությունները կանխելու համար: Մարտունու ներքին գործերի շրջանային վարչությունը ամեն ինչ անում է դրության տերը դառնալու համար: Սակայն, միպետ Գարրիելյանի խոսքերով ասած, սա կազմակերպված է «բարձր մակարդակով» եւ գործնականում վերահսկել անհնար է:

Շրջանում արդեն սկսվել են գարնանային աշխատանքները.

- Ինչպե՞ս ստիպես մարդկանց աշխատել սահմանամերձ գոտիներում, երբ ամեն վայրկյան նրանց կյանքին վտանգ է սպառնում,- ասում է շրջգործկոմի նախագահ Ս. Սեյրանյանը:

Լեւոն ՄԻՔԱԵԼՅԱՆ